«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ի 2017 թվականի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 1391-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» N 1391-Ն որոշման՝

- վերնագրում, 4-րդ կետում և N 4 հավելվածի «Անվանացանկ» և «Նկարագրեր» բաժինների վերնագրերում համապատասխանաբար «ընդհանուր» բառը փոխարինել «հիմնական» բառով.
- N 4 հավելվածում՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր

ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկում՝

ա. «Հանրակրթական ուսումնական հաստատության հատուկ մանկավարժ (ընդհանուր և մասնագիտացված ծրագրեր իրականացնող դպրոցներում՝ ուսուցչի օգնական)» տողից հանել «(ընդհանուր և մասնագիտացված ծրագրեր իրականացնող դպրոցներում՝ ուսուցչի օգնական)» բառերը,

բ. Լրացնել նոր տող՝ հետևյալ բովանդակությամբ՝

Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնական,

- Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրեն բաժնի 1-ին կետում՝

ա. լրացնել ներ 3.1 և 14.1 ենթակետեր՝

3.1) պատասխանատվություն է կրում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման և դրանց որակի ապահովման համար.»

«14.1) ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի համար կրթության առանձնահատուկ պայմաններ՝ հանրակրթական հիմնական առարկայական ծրագրերի յուրացմանը նպատակաուղղված ուսուցում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ անհատական ուսուցման պլանի մշակում և իրականացում.»,

բ. 13-րդ կետում «շահերը» բառից հետո լրացնել «, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) հայտնաբերման խնդրահարույց դեպքում եռօրյա ժամկետում տեղեկացնում (ծանուցում) է տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին)» բառերը:

- III. Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ բաժնի 1-ին կետում՝

ա. 1-ին ենթակետի մակարդակի բառից հետո լրացնել և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող աշխատողներին մեթոդական շարունակական օժանդակության բառերը,

բ. լրացնել նոր՝ 5.1, 5.2 և 5.3 ենթակետեր՝

5.1) ուսումնական հաստատության տնօրենի հետ միասին պատասխանատվություն է կրում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման և դրանց որակի ապահովման համար.

5.2) պատասխանատու է դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման և անհատական ուսացման պլանի (այսուհետ՝ ԱՈԻՊ) մշակման,

իրականացման և գնահատման համար.

5.3) պահպանում է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն ստացող յուրաքանչյուր սովորողի համար կազմված անհատական գործը՝ թղթապանակը,»:

4) IV.Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ բաժնի 1-ին կետը լրացնել նոր՝ 3.1 և 3.2 ենթակետերով՝

3.1) մասնակցում է ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների կողմից սովորողների աջակցության ծառայությունների տրամադրման և նրանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման գործընթացի կազմակերպման հարցերում.

3.2) աջակցություն է տրամադրում սովորողներին և ծնողներին՝ ուսման մեջ, առօրյա հարաբերություններում և արտակարգ իրավիճակներում հանդիպող արգելքների ու դժվարությունների հաղթահարման գործընթացում.»

5) IV.Հանրակրթական ուսումնական հաստատության **սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը** բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետում մանկապատանեկան կոլեկտիվի բառերը փոխարինել **սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների** բառերով,

- VII. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչը բաժնի 1-ին կետում.

ա. լրացնել նոր 2.1 և 2.2 ենթակետեր՝

«2.1) իրականացնում է սահմանված ձևաչափին համապատասխան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ԱՈԻՊ-ի կազմումը և վարումը.

2.2) ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ հանրակրթության պետական չափորոշիչի հանրակրթական ծրագրերի բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները՝ ըստ կրթական աստիճանների և առարկայական ծրագրերի հիման վրա յուրաքանչյուր սովորողի համար մշակված ԱՈԻՊ-ի.»:

բ. 3-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3) իրականացնում է սովորողների դիտարկում, առաջադիմությանը նպաստող կամ խոչընդոտող գործոնների բացահայտում, մասնակցում է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատմանը:.

գ. լրացնել նոր՝ 10.1 և 10.2 ենթակետեր՝

«10.1) համագործակցում է ուսուցչի օգնականի հետ՝ սովորողների ուսուցման արդյունավետ մեթոդների ու տեխնոլոգիաների ընտրության, ուսուցման կազմակերպման խմբային և անհատականացված մոտեցումների

պլանավորման, ուսումնական նյութերի մշակման աշխատանքներում.

10.2) գործընկերների հետ միասին իրականացնում է սովորողի, (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) կրթության որակի ապահովմանն ուղղված այլընտրանքային ծրագրային, մեթոդամանկավարժական աշխատանքներ՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարողությունները առանձնահատկությունները ու հետաքրքրությունները.»

դ. VII. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչը բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

3. 1) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի կրթական աստիճանով) կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

- VIII. **Հանրակրթական ուսումնական հաստատության հատուկ մանկավարժը» բաժնի՝**

ա. վերնագրում «օլիգոֆրենամանկավարժ» բառից հետո լրացնել «, էրգոթերապիստ» բառը.

բ. 1-ին կետի 2-րդ ենթակետում կրթական բառը փոխարինել «կրթության առանձնահատուկ պայմանների» բառերով:

գ. 1-ին կետի 3-րդ ենթակետում «կրթական կարիքներին համապատասխան ուսուցման մեթոդներ, ձևեր և հնարքներ առաջարկում» բառերը փոխարինել «յուրաքանչյուր սովորողի համար առաջարկում կրթական առաջընթացին նպաստող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ».

դ. 1-ին կետի 5-րդ ենթակետում «հետազոտման» բառից առաջ լրացնել ուսուցչի(ների) հետ միասին՝ սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման առանձնահատկությունների բառերով,

ե. 1-ին կետի 6-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

զ. 1-ին կետի 8-րդ ենթակետում «հետ» բառից հետո լրացնել տեխնիկական միջոցներով, բառերը,

- Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբան բաժնի 1-ին կետում լրացնել նոր՝ 4.1 և 5.1 ենթակետեր՝

4.1) մասնակցում է ուսուցիչների և ուսումնական հաստատության մանկավարժական մյուս աշխատողների կողմից սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցմանը՝ ապահովելով մասնագիտական շարունակական խորհրդատվություն,

5.1) բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է երեխաների

ուսումնառության ընթացքում նկատված հոգեբանական խնդիրները.,

- «X. Հանրակրթական ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժ» բաժնի 1-ին կետում լրացնել նոր՝1, 4.2 և 4.3 ենթակետեր.

4.1) մասնակցում է ուսուցիչների և ուսումնական հաստատության մանկավարժական մյուս աշխատողների կողմից սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցմանը,

4.2) բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է երեխաների մոտ նկատված սոցիալ-մանկավարժական խնդիրները.

4.3) սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) հայտի հիման վրա, սոցիալական դեպքի վարման շրջանակներում մասնակցում է համակարգող և խորհրդատվական մարմինների, ինչպես նաև բազմամասնագիտական խմբի աշխատանքներին:»

- **« Հանրակրթական ուսումնական հաստատության նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցիչը (զինղեկ)» բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետից հանել «կամ միջին» բառերը,**
- **« Հանրակրթական ուսումնական հաստատության գրադարանավարը» բաժնի 3-րդ կետի 1-ին ենթակետում « համապատասխան որակավորմամբ» բառերից հետո լրացնել** «կամ վերջին տասը տարվա ընթացքում գրադարանային կամ մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ» բառերը,
- լրացնել նոր՝ **XIV. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնական բաժին.**

XIV. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆ

1. Պաշտոնային պարտականությունները՝

- օգնում է ուսուցիչներին հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորման և իրականացման գործընթացներում,
- աջակցում է ԱՈՒՊ-ի իրականացմանը՝ համագործակցելով տվյալ սովորողին դասավանդող ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրողների և ծնողների հետ.
- աջակցում է ուսուցիչներին հանրակրթության պետական չափորոշիչով և առարկայական չափորոշիչներով ու ծրագրերով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար՝ ԱՈՒՊ-ով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտություն-ների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման գործընթացներում՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և տեխնոլոգիաներ,
- ըստ հաստատության տնօրինության և ուսուցչի կողմից առաջադրված նպատակի՝ դասարանում իրականացնում է սովորողի

ուսումնառության խնդիրների ուղղությամբ դիտարկումներ, դրանց վերաբերյալ կատարում վերլուծություններ,
- օժանդակում է ուսուցիչներին բոլոր, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ուսումնական նյութերի պատրաստման գործընթացում,
- մասնակցում է ուսուցչի կողմից դասերի պլանավորման աշխատանքներին.
- ուսուցիչների հետ միասին բացահայտում, դիտարկում, հետազոտում է երեխաների ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրները,
- նպաստում է սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը,
- հարգում և պաշտպանում է սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը,
- համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով,
- մասնակցում է հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին,
- պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:
- սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) հայտի հիման վրա, սոցիալական դեպքի վարման շրջանակներում մասնակցում է համակարգող և խորհրդատվական մարմինների, ինչպես նաև բազմամասնագիտական խմբի աշխատանքներին:

2. Ուսուցչի օգնականի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները՝

- հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի պաշտոնը զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝

ա. ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հան-րապետության օրենքները, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը,

բ. առարկայական չափորոշիչները, ծրագրերը և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,

գ. մանկավարժության տեսության և մեթոդիկայի, հոգեբանության, մինչբժշկական օգնության հիմունքները,

- աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները:

3. Որակավորման պահանջները՝

- Ուսուցչի օգնականի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մանկավարժական կրթություն, կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:
- Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի պաշտոնը կարող է զբաղեցնել սույն պաշտոնի որակավորման պահանջները բավարարող և տվյալ հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցչի պաշտոնում չաշխատող անձը: